Համայնք* Կոտայք (անվանումը) 564 (կոդ)

| NN | Նպատակային նշանակությունը | Գործառնական նշանակություն, հողատեսք | Կոդ N/N | Ընդամենը ոռոգվող հողեր Σ(2+3+4+5+6) | Սեփականության սուբյեկտ: ՀՀ քաղաքացիներ | ՀՀ իրավաբանական անձ | համայնքային | պետական | Օտարերկրյա քաղաքացիներ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ա | Բ | Գ | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 1,1 | 1. Գյուղատնտեսական | վարելահող | | 450,7 | 403,2 | | 47,5 | | |
| 1,2 | | բազմամյա տնկարկներ, ընդամենը | | 22,3 | 22,3 | | | | |
| 1.2.1 | | այդ թվում* պտղատու այգի | | 22,3 | 22,3 | | | | |
| 1.2.2 | | խաղողի այգի | | | | | | | |
| 1.2.3 | | այլ | | | | | | | |
| 1,3 | | խոտհարք | | | | | | | |
| 1,4 | | արոտ | | | | | | | |
| 1,5 | | այլ հողատեսքեր | | | | | | | |
| 1 | | Ընդամենը (1.1+1.2+1.3+1.4+1.5) | | 472,9 | 425,4 | | 47,5 | | |
| 2,1 | 2.Բնակավայրերի | բնակելի կառուցապատման | | 52,0 | 51,9 | | | | 0,1 |
| 2.1.1 | | այդ թվում տնամերձ հողեր | | 52,0 | 51,9 | | | | 0,1 |
| 2.1.2 | | այգեգործական (ամառանոցային) | | | | | | | |
| 2,2 | | ընդհանուր օգտագործման | | | | | | | |
| 2,3 | | այլ հողեր | | | | | | | |
| 2 | | Ընդամենը (2.1+2.2+2.3) | | 52,0 | 51,9 | | | | 0,1 |
| 3 | 3. Արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության | | | | | | | | |
| 4 | 4. Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների | | | | | | | | |
| 5 | 5. Հատուկ պահպանվող տարածքների | | | | | | | | |
| 6 | 6. Հատուկ նշանակության | | | | | | | | |
| 7,1 | 7. Անտառային | անտառ | | | | | | | |
| 7,2 | | թփուտ | | | | | | | |
| 7,3 | | վարելահող | | | | | | | |
| 7,4 | | խոտհարք | | | | | | | |
| 7,5 | | արոտ | | | | | | | |
| 7,6 | | այլ հողեր | | | | | | | |
| 7 | | Ընդամենը (7.1+7.2+7.3+7.4+7.5+7.6) | | | | | | | |
| 8 | 8. Ջրային | | | | | | | | |
| 9 | 9. Պահուստային | | | | | | | | |
| ԸՆԴԱՄԵՆԸ ՈՌՈԳՎՈՂ ՀՈՂԵՐ Σ1+2+3+4+5+6+7+9* | | | | 524,9 | 477,4 | | 47,5 | | 0,1 |

Համայնքի ղեկավար /ստորագրություն, կնիք/

Կատարող՝ /ստորագրություն/

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ԿՈՏԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ *03503824*

Ձև N 22

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

հողային ֆոնդի առկայության և բաշխման

(ըստ նպատակային նշանակության, հողատեսքերի ու գործառնական նշանակության և սեփականության սուբյեկտների, առ 12/07/2017թ.)

Մարզ: Կոտայք (անվանում) — 7 (կոդ)

Համայնք: Կոտայք (անվանում) — 564 (կոդ)

(հեկտարներով)

| NN | Նպատակային նշանակություն | Հողատեսք, գործառնական նշանակություն | Կոդ NN | Ընդամենը (2+3+4+8) | Սեփականության սուբյեկտներ | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | [illegible] | [illegible] | համայնքային | | | | [illegible] | | | |
| | | | | | | | Ընդամենը (5+6+7) | [illegible] | [illegible] | [illegible] | Ընդամենը (9+10+11) | [illegible] | [illegible] | [illegible] |
| ա | | բ | գ | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 |
| 1.1 | 1. Գյուղատնտեսական նշանակության | վարելահող | | 634,35 | 546,55 | | 87,80 | | 45,30 | 42,50 | | | | |
| 1.2 | | բազմամյա տնկարկներ | | 22,23 | 22,23 | | | | | | | | | |
| 1.2.1 | | այդ թվում՝ | | 22,23 | 22,23 | | | | | | | | | |
| 1.2.2 | | խաղողի այգի | | | | | | | | | | | | |
| 1.2.3 | | այլ բազմամյա | | | | | | | | | | | | |
| 1.3 | | խոտհարք | | 0,87 | 0,87 | | | | | | | | | |
| 1.4 | | արոտ | | 394,74 | 10,76 | | 383,98 | | 8,00 | 375,98 | | | | |
| 1.5 | | այլ հողատեսքեր | | 167,10 | 54,58 | | 112,52 | | 9,94 | 102,58 | | | | |
| 1 | | Ընդամենը | | 1219,29 | 634,99 | | 584,30 | | 63,24 | 521,06 | | | | |
| 2.1 | 2. Բնակավայրերի | բնակելի | | 70,17 | 63,47 | | 6,35 | | | 6,35 | | | | |
| 2.1.1 | | այդ թվում՝ | | 63,82 | 63,47 | | | | | | | | | |
| 2.1.2 | | այգեգործական (ամ | | | | | | | | | | | | |
| 2.2 | | հասարակական | | 1,96 | 0,04 | | 1,20 | | | 1,20 | 0,72 | | | 0,72 |
| 2.3 | | խառը | | | | | | | | | | | | |
| 2.4 | | ընդհանուր | | 12,86 | | | 12,86 | | | 12,86 | | | | |
| 2.5 | | այլ հողեր | | 9,20 | | | 9,20 | | | 9,20 | | | | |
| 2 | | Ընդամենը | | 94,19 | 63,51 | | 29,61 | | | 29,61 | 0,72 | | | 0,72 |
| 3.1 | 3. Արդյունաբ., ընդերքօգտ. | արդյունաբերության | | 0,31 | 0,31 | | | | | | | | | |
| 3.2 | | գյուղատնտեսական | | 6,97 | 1,92 | | 5,05 | | 3,50 | 1,55 | | | | |
| 3.3 | | պահեստարանների | | | | | | | | | | | | |
| 3.4 | | ընդերք | | | | | | | | | | | | |
| 3 | | Ընդամենը | | 7,28 | 2,23 | | 5,05 | | 3,50 | 1,55 | | | | |
| 4.1 | 4. Էներգ., տրանսպ., կապի, կոմունալ | էներգետիկայի | | 0,01 | | | 0,01 | | | 0,01 | | | | |
| 4.2 | | կապի | | | | | | | | | | | | |
| 4.3 | | տրանսպորտի | | 5,12 | | | | | | | 5,12 | | | 5,12 |
| 4.4 | | կոմունալ | | 8,10 | | | 8,00 | | | 8,00 | 0,10 | | 0,10 | |
| 4 | | Ընդամենը | | 13,23 | | | 8,01 | | | 8,01 | 5,22 | | 0,10 | 5,12 |
| 5.1 | 5. Հատուկ պահպանվող տարածքների | բնապահպանական | | | | | | | | | | | | |
| 5.1.1 | | այդ թվում՝ արգելոցների | | | | | | | | | | | | |
| 5.1.2 | | | | | | | | | | | | | | |
| 5.1.3 | | ազգային | | | | | | | | | | | | |
| 5.2 | | առողջարարական | | | | | | | | | | | | |
| 5.3 | | հանգստի | | | | | | | | | | | | |
| 5.4 | | պատմական և | | 7,72 | | | 6,00 | | | 6,00 | 1,72 | | | 1,72 |
| 5 | | Ընդամենը | | 7,72 | | | 6,00 | | | 6,00 | 1,72 | | | 1,72 |
| 6 | 6. Հատուկ նշանակության | Ընդամենը | | | | | | | | | | | | |
| 7.1 | 7. Անտառային | անտառ | | 68,35 | | | | | | | 68,35 | | | 68,35 |
| 7.2 | | թփուտ | | | | | | | | | | | | |
| 7.3 | | վարելահող | | | | | | | | | | | | |
| 7.4 | | խոտհարք | | | | | | | | | | | | |
| 7.5 | | արոտ | | | | | | | | | | | | |
| 7.6 | | այլ հողեր | | | | | | | | | | | | |
| 7 | | Ընդամենը | | 68,35 | | | | | | | 68,35 | | | 68,35 |
| 8.1 | 8. Ջրային | գետեր | | | | | | | | | | | | |
| 8.2 | | ջրամբարներ | | | | | | | | | | | | |
| 8.3 | | լճեր | | | | | | | | | | | | |
| 8.4 | | ջրանցքներ | | 4,95 | | | | | | | 4,95 | | | 4,95 |
| 8.5 | | հիդրոտեխն. և | | | | | | | | | | | | |
| 8 | | Ընդամենը | | 4,95 | | | | | | | 4,95 | | | 4,95 |
| 9.1 | 9. Պահուստային | աղուտներ | | | | | | | | | | | | |
| 9.2 | | ավազուտներ | | | | | | | | | | | | |
| 9.3 | | ճահիճներ | | | | | | | | | | | | |
| 9.4 | | | | | | | | | | | | | | |
| 9.5 | | այլ անօգտագործելի | | | | | | | | | | | | |
| 9 | | Ընդամենը | | | | | | | | | | | | |
| ԸՆԴԱՄԵՆԸ ՀՈՂԵՐ | | | | 1415,01 | 700,73 | | 632,97 | | 66,74 | 566,23 | 80,96 | | 0,10 | 80,86 |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԿՈՏԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Կոտայք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Կոտայք, ( 0222)63757, kotayq.kotayq@mta.gov.am

**Ո Ր Ո Շ Ու Մ**

12 ՀՈՒԼԻՍԻ 2017թվականի N 21-Ն

ԿՈՏԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ .

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 40-րդ կետի պահանջներով .

Համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Սահմանել Կոտայք համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման կանոնները համաձայն հավելվածի .

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրված հաջորդող 10-րդ օրը :

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ՌՈՄԱՆ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԱԳԻԿ
3. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՖԵԼԻՔՍ
4. ՄԿՐՏՉՅԱՆ ԳԱՐԻԿ
5. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ԿԱՐԵՆ
6. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ԱՂԱՍԻ
7. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՀԱԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված
Կոտայք համայնքի ավագանու
2017 թվականի հուլիսի 12-ի
N 21-Ն որոշման

*Կոտայք համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման կանոններ.*

*1.Հանրային սննդի օբյեկտը պետք է ունենա Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված համապատասխան գործունեության թույլտվություն:*

*2.Հանրային սննդի օբյեկտը պետք է ունենա ճաշացուցակ, որտեղ նշվում է կերակրատեսակների, խոհարարական արտադրատեսակների, խմորեղենի և հացաբուլկեղենի, գնովի ապրանքների ցուցակը, որը հանրային սննդի օբյեկտի կողմից առաջարկվում է սպառողին՝ մասնաբաժնի և գնի նշումով:*

*3.Հանրային սննդի կազմակերպման սրահը պետք է հատուկ կահավորված լինի նախատեսված պատրաստի խոհարարական արտադրանքի իրացման և սպառման կազմակերպման համար:*

*4.Մուտքի մոտ պետք է փակցված լինի ցուցանակ, որտեղ նշվում են ձեռնարկության անվանումը, տիպը, կազակերպական-իրավական տեսակը, իրավաբանական հասցեն և աշխատանքային ռեժիմը:*

*5.Սպասարկող անձնակազմի անդամները, որոնք անմիջապես առնչվում են սննդի հետ, պետք է ունենան անձնական սանիտարական գրքույկ:*

*6.Խոհարարն ու հրուշակագործը պետք է ունենան մասնագիտական կրթություն կամ մասնագիտական որակավորումը հաստատող փաստաթուղթ:*

*7.Սպասարկող անձնակազմի անդամները պետք է ունենան սանիտարական հագուստ, ինչպես նաև կազմակերպության ղեկավարի կողմից տրված անվանաքարտ՝ լուսանկարով, անվան, ազգանվան և զբաղեցրած պաշտոնի նշմամբ՝ վավերացված ձեռնարկության կնիքով:*

*8.Հանրային սննդի օբյեկտը պետք է ապահովված լինի տեխնոլոգիական գործընթացն ապահովող համապատասխան սարքավորումներով, այդ թվում օրենքով սահմանված կարգով ստուգաչափված կշեռքներով և չափման այլ համապատասխան թույլատրելի միջոցներով, ինչպես նաև տվյալ հանրային սննդի գործունեությունն իրականացնելու համար նախատեսված գույքով:*

*9.Բոլոր տեսակի հանրային սննդի օբյեկտները պետք է ունենան դեպի օբյեկտի մուտք տանող մատուցային և հետիոտնային ճանապարհներ, անհրաժեշտ տեղեկատվական ցուցանակներ, սանհանգույցներ:*

10.Ուսումնական հաստատություններում մանկական և բուժկանխարգելիչ կազմակերպություններում գործող հանրային սննդի օբյեկտներում արգելվում է ալկոհոլային խմիչքների իրացումը:

11. Ժամը 24-00-ից հետո աշխատող զվարճանքի օբյեկտներում արգելվում է ակնհայտ 16 տարին չլրացած անձանց մուտքը:

13. Ժամը 24-00-ից հետո աշխատող բոլոր հանրային սննդի օբյեկտները պետք է գտնվեն բնակարաններից առնվազն 50 մ հեռու:

14. Ժամը $24^{00}$-ից հետո աշխատող բոլոր հանրային սննդի օբյեկտների սրահի պատերը և պատուհանները պետք է ձայնամեկուսացված լինեն, որպեսզի ներսի աղմուկը չխարուցի շրջակա տարածքում բնակվող բնակիչների դժգոհությունը, ինչպես նաև ձեռնարկեն համապատասխան միջոցներ ժամը 23:00-7:00-ն օբյեկտի գործունեության հետ կապված նաև օբյեկտից դուրս լռության պահպանման ուղղությամբ:

15. Ժամը $24^{00}$-ից հետո աշխատող բոլոր հանրային սննդի օբյեկտները պետք ունենան պայմանագիր Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետական պահպանության բաժնի կամ անվտանգություն իրականացնող լիցենզավորված կազմակերպության հետ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԿՈՏԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Կոտայք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Կոտայք, ( 0222)63757, kotayq.kotayq@mta.gov.am

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

12 ՀՈՒԼԻՍԻ 2017թվականի N 22-Ն

ԿՈՏԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ .

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 41-րդ կետի պահանջներով .

Համայնքի ավագանին *ո ր ո շ ու մ է .*

1. Սահմանել Կոտայք համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու կարգը համաձայն հավելված 1-ի .

2. Սահմանել Կոտայք համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու պայմանները՝ համաձայն հավելված 2-ի .

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը :

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ՌՈՄԱՆ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԱԳԻԿ
3. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՖԵԼԻՔՍ
4. ՄԿՐՏՉՅԱՆ ԳԱՐԻԿ
5. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ԿԱՐԵՆ
6. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ԱՂԱՍԻ
7. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՀԱԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված 1
Կոտայք համայնքի ավագանու
2017 թվականի հուլիսի 12-ի N 22-Ն որոշման

# ԿՈՏԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԿԱՐԳ

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով (այսուհետ՝ Կարգ) սահմանվում է Կոտայք համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդի (այսուհետ՝ գովազդ) տեղադրման կարգը: Կարգն ընդունվել է «Գովազդի մասին» ՀՀ օրենքին համապատասխան:

2. Արտաքին գովազդը (այսուհետ՝ գովազդ) իրավաբանական կամ ֆիզիկական անձանց, ապրանքների, գաղափարների կամ նախաձեռնությունների մասին տեղեկությունների տարածումն է բնակավայրերում գովազդի միջոցներով(վահանակների, գրաժապավենների, լուսատախտակների, պլակատների, ազդագրերի, հայտարարությունների և այլն) անորոշ թվով անձանց շրջանում և կոչված է ձևավորելու կամ պահպանելու հետաքրքրությունը տվյալ ֆիզիկական և իրավաբանական անձի, ապրանքների կամ նախաձեռնությունների նկատմամբ:

ՀՀկառավարության 2002թ. մարտի 19-ի N 270 որոշման պահանջներին համապատասխան տեղադրվող ցուցանակների վրա զետեղվող տեղեկատվությունը արտաքին գովազդ չի համարվում: Արտաքին գովազդ են համարվում «Կոտայք համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդի տեղաբաշխման (տեղադրման) չափորոշիչներով» (այսուհետ՝Չափորոշիչներ) սահմանված մակերեսի ցավելի մակերեսով տեղադրվող ֆիրմային նշանները և գովազդվող ապրանքանշանները:

3. Կանոնները տարածվում են բոլոր այն տարածքների և տրանսպորտային միջոցների վրա, որտեղ պետք է տեղադրվի արտաքին գովազդը:

4. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի վրա գովազդի միջոց տեղադրելու համար ՀՀ հողային օրենսգրքով սահմանված կարգով Կոտայք համայնքի ղեկավարի որոշմամբ հողամասը օգտագործման իրավունքով հանձնվում է դիմումներ կայացրած գովազդատուին (գովազդակրին)՝միաժամանակ կնքելով հողօգտագործման համապատասխան պայմանագիր, հետագայում տվյալ կողմի հետ նախապատվության իրավունքով երկարացնելու պայմանով:

5. Գովազդի տեղադրումը թույլատրվում է, եթե այն համապատասխանում է «Գովազդի մասին» ՀՀ օրենքի, Կարգի և Պայմանների պահանջներին:

6. «Գովազդի մասին» ՀՀ օրենքին, կարգին և պայմաններին համապատասխան Կոտայքի համայնքապետարանը որոշում է արտաքին գովազդի ծավալը, քանակությունը, տեղաբաշխման կարգն ու պայմանները:

ԳՈՎԱԶԴԻ (ՏԵՂԱԴՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆԸ

7. Թույլտվությունը (հետագայում՝ թույլտվություն) «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի համաձայն և սահմանված Կարգով տրվում է Կոտայք համայնքի ղեկավարի կողմից՝ Ձև 1-ով սահմանված ձևաչափով:

8. Գովազդային միջոց տեղադրելու համար գովազդատուն (գովազդակիրը) հայտ է ներկայացնում Կոտայք համայնքի ղեկավարին՝ նշելով իր անունը, գտնվելու վայրը, գովազդի տեղադրման վայրը և ժամկետը, ինչպես նաև հարցի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքները:

Հայտին կցվում է համապատասխան պատկերով և գրառումներով գովազդի միջոցի էսքիզը, որտեղ նշվում են գովազդի արտաքին չափերը, գովազդի տեղադրման ձևը (վահանակ, լուսատախտակ, գրաժապավեն, պլակատներ և այլն) և տեխնիկական լուծումները:

9. Կոտայքի համայնքապետարանը գովազդի միջոց տեղադրելու համարգով ազդատուից (գովազդակրից) հայտը և անհրաժեշտ փաստաթղթերը ստանալուց հետո պարզում է գովազդային միջոցի համապատասխանությունը կարգի և պայմանների պահանջներին (եթե այն թերի է, հետ է վերադարձվում թերությունը վերացնելու և նորից 15-օրյա ժամկետում ներկայացնելու համար), և 15 օրվա ընթացքում Կոտայք համայնքի ղեկավարի որոշմամբ տրվում է գովազդի տեղադրման թույլտվություն, որում նշվում են՝ գովազդատուի (գովազդակրի) անվանումը, գովազդի չափերը, տեղաբաշխման (տեղադրման) ձևը, գովազդային նյութերի անվանումը, թույլտվության գործողության ժամկետը:

10. Նույն հասցեում գովազդ տեղադրելու համար մեկից ավելի գովազդատուների (գովազդակիրների) հայտերի առկայության դեպքում Կոտայք համայնքի ղեկավարը «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի համաձայն հայտարարում և անց է կացնում մրցույթ, որի արդյունքներով մրցույթի հաղթողին տրվում է գովազդի տեղադրման թույլտվություն:

11. Թույլտվությունը հանդիսանում է հաշվառման փաստաթուղթ, որը գրանցվում է Կոտայքի համայնքապետարանի թույլտվությունների հաշվառման մատյանում, իսկ թույլտվության

պատճենը և հաշվառման մատյանը պահվում են համայնքապետարանի աշխատակազմի համապատասխան համայնքային ծառայողի մոտ:

12. Գովազդի միջոցի տեղադրման վերաբերյալ գովազդատուի (գովազդակրի), հայտը 15-օրյա ժամկետում կարող է մերժվել այն դեպքում, եթե՝

12.1 ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում Կարգի և Պայմանների պահանջներին.

12.2 խախտվում են «Գովազդի մասին» ՀՀօրենքի, «Լեզվի մասին» ՀՀ օրենքի և ՀՀ այլ իրավական ակտերի պահանջները.

12.3 գովազդի միջոցի տեղադրմամբ խոչընդոտվում է ճանապարհային երթևեկությունը կամ քաղաքացիների անցուղարձը, խախտվում են անձանց օրենքով պաշտպանված իրավունքներն ու շահերը:

13. Գովազդային միջոց տեղադրելու հայտը մերժելու վերաբերյալ որոշման մեջ պետք է հստակ նշվեն մերժման պատճառներն ու հիմքերը:

14. Գովազդային նյութերը գովազդային միջոցների վրա տեղադրելու ժամանակ, ինչպես նաև արդեն տեղադրված գովազդվող տեղեկատվության փոփոխման դեպքում, գովազդատուն (գովազդակիրը) մինչև գովազդային նյութերի տեղադրումը կամ արդեն տեղադրված գովազդվող տեղեկատվության փոփոխումը, այդ մասին գրավոր տեղեկացնում է Կոտայքի համայնքապետարանին՝ կից ներկայացնելով համապատասխան պատկերով և գրառումներով գովազդի էսքիզը, որտեղ նշվում են նաև գովազդի արտաքին չափերը: Գովազդի էսքիզը համաձայնեցվում է Կոտայքի համայնքապետարանի աշխատակազմի համապատասխան մասնագետի հետ:

15. Գովազդը պետք է համապատասխանի «Գովազդի մասին» ՀՀ օրենքի, «Լեզվի մասին» ՀՀ օրենքի, Կարգի, Պայմանների և ՀՀ այլ իրավական ակտերի պահանջներին:

16. Գովազդի տեղադրման միջոցի մոնտաժային աշխատանքները կատարվում են հայտատուի պատվերով՝ մասնագիտացված կազմակերպությունների կողմից մշակված և Կոտայքի համայնքապետարանի աշխատակազմի համապատասխան հարցերով զբաղվող մասնագետի հետ համաձայնեցված նախագծով: Արտաքին գովազդի միջոց տեղադրելու համար գովազդակիրն օրենքով սահմանված կարգով պատասխանատվություն է կրում գովազդի տեղադրման միջոցի մոնտաժման ապահովության և դրա անվթար շահագործման համար:

17. Գովազդատուն (գովազդակիրը) իրավասու չէ արտաքին գովազդի տեղադրման համար իրեն տրված թույլտվությունը փոխանցել կամ օտարել այլ անձի:

18. Գովազդի տեղադրման թույլտվության ժամկետը լրանալու կամ երկարացնելու, պայմանագրով նախատեսված հիմքերով այն վաղաժամ դադարելու (լուծելու) դեպքում գովազդատուն (գովազդակիրը) պարտավոր է ողջամիտ ժամկետում իր միջոցներով ապամոնտաժել գովազդը և դրա տեղաբաշխման միջոցները, իսկ զբաղեցրած տարածքը բերել նախնկին վիճակին:

19. Կարգով նախատեսված պարտավորությունը գովազդատուի (գովազդակրի) կողմից չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Կոտայքի համայնքի ղեկավարի որոշման համաձայն գովազդի (գովազդային միջոցի) ապամոնտաժումն իրականացվում է Կոտայքի համայնքապետարանի կողմից՝ օրենքով սահմանված կարգով գովազդատուից (գովազդակրից) ստանալով համապատասխան փոխհատուցում:

## ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎՃԱՐԻ ՄՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

20. Կոտայքի համայնքի ավագանին համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքի դրույքաչափերը սահմանում է «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքին համապատասխան:

21. Այն դեպքում, երբ թույլտվության և պայմանագրի գործողության ընթացքում գովազդվող տեղեկատվությունը փոփոխվում է, որի համար օրենքով նախատեսված է տեղական տուրքի այլ դրույքաչափ, գովազդատուն (գովազդակիրը) վճարումը կատարում է «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի համաձայն Կոտայք համայնքի ավագանու կողմից հաստատված համապատասխան դրույքաչափերով:

22. Կարգին համապատասխան վճարված գումարներն ուղղվում են Կոտայք համայնքի բյուջե:

23. Գովազդատուի (գովազդակրի) կողմից անբարեխիղճ գովազդ թույլ տալու դեպքում Կոտայք համայնքի ղեկավարը գովազդի մասին օրենսդրության խախտման դադարեցման և հակագովազդի իրականացման վերաբերյալ գրավոր նախազգուշացնում է գովազդատուին (գովազդակրին):

24. Գովազդատուները (գովազդակիրները) իրավասու են օրենքով սահմանված կարգով դատական կարգով բողոքարկել գովազդի տեղաբաշխման (տեղադրման) կապակցությամբ Կոտայք համայնքի ղեկավարի որոշումներն ու գործողությունները:

25. Կոտայք համայնքում արտաքին գովազդի տեղաբաշխման (տեղադրման) գործընթացի նկատմամբ հսկողությունն օրենքով սահմանված կարգով և գովազդի մասին

օրենսդրության պահպանման նկատմամբ երահսկողությունը իրականացնում է Կոտայք համայնքի ղեկավարը:

26. Գովազդային օրենսդրության պահանջների խախտումը առաջացնում է օրենքով նախատեսված պատասխանատվություն:

*Ձև1*

## ԿՈՏԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ
## ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ (ՏԵՂԱԴՐՄԱՆ)

## ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ N ___

Տրվում է ________________________________

գովազդատուին (կամ) գովազդակրիանվանումը

________________________________

արտաքինգովազդիտեղաբաշխման (տեղադրման) վայրը (տեղը)

________________________________

արտաքինգովազդիտեղաբաշխելու (տեղադրելու) միջոցը
(վահանակ, լուսատախտակ, գրաժապավեն, պաստառևայլն)

________________________________

գովազդիտեսակը

________________________________

գովազդայիննյութիանվանումը

Գովազդի մակերեսը ____ քմ

Թույլտվությանգործողությանժամկետը՝ «__»________20_թ.

առ՝ «__» ________20_թ.

Կ.Տ.

Կոտայքի համայնքապետ՝ ________________

Հավելված 2
Կոտայք համայնքի ավագանու
2017 թվականի հուլիսի 12-ի N 22-Ն որոշման

# ԿՈՏԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Կոտայք համայնքի տարածքում արտաքին գովազդի տեղադրման պայմանները (այսուհետ՝ Պայմաններ), մշակվել են «Գովազդի մասին» ՀՀ օրենքի, «Կոտայք համայնքի տարածքում արտաքին գովազդի տեղադրման կարգի և պայմանների» (այսուհետ՝ Կարգ) համապատասխան:

2. Կոտայք համայնքի տարածքում արտաքին գովազդի միջոցների (այսուհետ՝ գովազդ) տեղադրումը թույլատրվում է Կարգի և Պայմանների պահանջներին համապատասխան:

## ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ

1. Արտաքին գովազդի միջոցներ համարվում Կոտայք համայնքի վարչական տարածքում տեղադրվող գովազդային տեղեկատու կրողները՝ անկախ շենքերի, շինությունների և հողամասերի սեփականության ձևից:

## ԱՐՏԱՔԻՆԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

1. Գովազդի տեղադրմանը ներկայացվող պահանջները՝

1.1 Կոտայք համայնքի տարածքում գովազդը և դրանց առանձին մասերը չեն կարող տեղադրվել երթևեկելի մասի մակերևույթից 6 մ-ից ցածր բարձրությամբ եզրաքար չունեցող ճանապարհի կողքին:

1.2 Գովազդի միջոցները չպետք է՝

- խոչընդոտեն ճանապարհային երթևեկության ապահովմանն ու անվտանգությանը, փողոցների ու մայթերի անցմանը.
- սահմանափակեն տեսանելիությունը ավտոճանապարհների վրա.
- առաջացնեն երթևեկության մասնակիցների կուրացում (լույսով, այդ թվում նաև անդրադարձող).
- խանդիսանան հետիոտնի շարժմանը արգելք.

• լինեն ճանապարհների վտանգավոր հատվածներում և տեղադրվեն լուսամփոփների ու ճանապարհային կանգնակների վրա:

1.3Գովազդի տեղադրումը տրանսպորտային միջոցների վրա չպետք է հակասի ՀՀ կառավարության 2005թ. նոյեմբերի 24-ի N 2137-Ն որոշման պահանջին:

1.4Գովազդ տեղադրել չի թույլատրվում

• բնակելի շենքերի մոտ, եթե դրանք հանդիսանում են աղմուկի, տատանման, հզոր ճառագայթման և էլեկտրամագնիսական դաշտի աղբյուր.

• ճարտարապետական հուշարձանների վրա, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների շենքերի վրա և դրանց տարածքում.

• ճանապարհային ցանցում, երբ այն անհամապատասխան է ճանապարհատրանսպորտային տվյալ իրավիճակի հետ և նմանություն ունի (արտաքին տեսքով, պատկերով և ձայնային էֆեկտով) ճանապարհային նշանների, ճանապարհային երթևեկության կազմակերպման և այլ տեխնիկական միջոցների հետ.

• փողոցների խաչմերուկների սահմաններից և դրանց մոտեցումներից 20 մ-ից ոչ պակաս հեռավորության վրա:

2. Գովազդի առանձին կանգնած մեայուն միջոցների տեսակները՝

Վահանակային կայանքները (վահանակները) տեղեկատվության համար մակերես նախատեսող կոնստրուկցիաներեն և բաղկացած են հիմքից, հիմնակմախքից (կարկաս) և տեղեկատու դաշտից.

2.1 Տեղեկատու դաշտի չափի տեսակներն են՝

• մեծչափերի—3մ X 4մ, 3մ X 6մ և այլ չափերի

• միջին չափերի—1.8մ X1.2մ, 2մ X 3մ

• փոքր չափերի—0.6մ X 0.9մ և ավելի փոքր չափերի.

2.2 Վահանակներին ներկայացվող պահանջներն են՝

• երկկողմանի կատարում,

• միակողմանի կատարում, որի դեպքում գովազդի հակառակ կողմը պարտադիր դեկորատիվ ձևավորում է.

2.3 Փողոցներում մեկ ուղղությամբ երկու հարևան վահանակների միջև եղած հեռավորությունը պետք է կազմի առնվազն՝

| | |
|---|---|
| • 10 քմ—12 քմ՝ | 50 մ—75 մ |
| • 6 քմ—10 քմ՝ | 30 մ—50 մ |
| • 4 քմ—6 քմ՝ | 20 մ—30 մ |
| • 2 քմ—4 քմ՝ | 10 մ —20 մ |

- մինչև 2 քմ 10 մ.

2.4 Մասնագիտական փորձաքննություն անցած և համաձայնեցված նախագծերի առկայության դեպքում կարող են օգտագործվել կոնստրուկցիաներ:

3. Շենքերի, շինությունների, ինչպես նաև Կոտայք համայնքի բարեկարգման տարրերի վրա տեղաբաշխվող (տեղադրվող) արտաքին գովազդի և տեղեկատվության մնայուն միջոցների տեսակները՝

3.1 Տանիքային կայանքները ծավալային կամ մակերեսային կոնստրուկցիաներ են, որոնք տեղադրվում են ամբողջովին կամ մասամբ՝ շենքի ճակատային մասում կամ տանիքին:

3.1.1 Տանիքային կայանքները բաղկացած են կոնստրուկցիայի կրող մասի ամրակցման տարրերից և տեղեկատու կայանքից:

3.1.2 Ամրակցման տարրերը, ինչպես և կոնստրուկցիայի կրող մասի հակառակ կողմը պետք է ծածկվեն դեկորատիվ պանելով:

3.1.3 Կոնստրուկցիաների միջոցով տանիքային կայանքի գովազդային վահանակի տեղադրումը պետք է համաձայնեցվի Կոտայք համայնքապետարանի աշխատակազմի համապատասխան աշխատակցի հետ:

3.2 Պատի մեծանկարներ (պաննո) կոչվում են արտաքին գովազդի այն միջոցները, որոնք տեղադրվում են շինությունների պատերին հետևյալ ձևերով՝

3.2.1 Պատկեր (տեղեկատվական դաշտ), որն անմիջապես շերտածածկում է պատը: Պատկերի կոնստրուկցիան հավաքվում է ամրակցման տարրերից, հիմնակմախքից և տեղեկատու դաշտից:

3.2.2 Պատի մեծանկարների տեղեկատու դաշտի մակերեսը որոշվում է կոնստրուկցիայի կամ անմիջական չափերով:

3.3 Բարձակ (կոնսոլային կոնստրուկցիա) են կոչվում երկկողմանի հարթակային վահանակները, որոնք ամրակցվում են կայմասյուներին կամ շենքերի վրա: Համապատասխան թույլտվության դեպքում թույլատրվում է բարձակները տեղադրել քաղաքային լուսավորման և կոնտակտային ցանցերի կրող կոնստրուկցիաների վրա:

3.3.3 Շահագործման անվտանգության նպատակով բարձակները տեղադրվում են հողի մակերևույթից ոչ պակաս, քան 3մ բարձրության վրա:

3.3.4 Հիմքերի վրա կանգնեցված բարձակները տեղադրվում են երթևեկելի մասից դուրս՝ մայթի կողմը: Արգելվում է մեկից ավելի բարձակների տեղադրումը մեկ հիմքի վրա:

3.3.5 Բարձակի տեղեկատու դաշտի մակերեսը հաշվարկվում է կողմերի ընդհանուր մակերեսով:

4. Էկրանավորող սարքավորումներն արտաքին գովազդի և տեղեկատվության միջոց են:

4.1 Դրանց կոնստրուկցիան ներառում է էկրանավորող (վերարտադրող) սարքավորման մակերես (էկրան) կամ տեղեկատու պատկեր:

4.2 Հարթ պատկերների համար նախատեսված տեղեկատու դաշտի մակերեսը որոշվում է էկրանավորող պատկերի մակերեսով:

5. Գովազդային վահանակների ներքևի եզրը պետք է տեղադրված լինի փողոցի մակերեսից 6մ -ից ոչ պակաս բարձրության վրա:

6. Հենասյան հիմքերը հողի ծածկույթում պետք է տեղադրվեն քաղաքաշինական նորմերին և շինարարական տեխնոլոգիաներին համապատասխան:

7. Չափորոշիչներում չնշված և ՀՀ կառավարության 2002 թ. մարտի 19-ի N 270 որոշմամբ հաստատված ցանկում չընդգրկված 2.0 քառակուսի մետրից ավելի մակերեսով ֆիրմային նշանների և գովազդվող տարբեր ապրանքանշանների տեղադրումն իրականացվում Կոտայքի համայնքապետարանի աշխատակազմի համապատասխան մասնագետի առաջարկությունների հիման վրա:

8. Տրանսպորտային միջոցների վրա գովազդի տեղադրումը.

8.1 Տրանսպորտային միջոցների վրա գովազդի տեղադրումն իրականացվում է ՀՀ կառավարության 2005թ. նոյեմբերի 24-ի N 2137-Ն որոշման պահանջներին համապատասխան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԿՈՏԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Կոտայք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Կոտայք, ( 0222)63757, kotayq.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ՀՈՒԼԻՍԻ 2017թվականի N 23

<< ՀԱՅՓՈՍՏ >> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ՎՃԱՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ .

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետի պահանջներով .

Համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ  է.***

1.<< Հայփոստ >> փակ բաժնետիրական ընկերության Կոտայք գյուղի 2223 փոստային բաժանմունքին խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցման դիմաց սահմանել վճար՝

1) մատակարարվող մեկ խորանարդ մետր ջրի համար ՝ 153 դրամ .

2) հեռացվող մեկ խորանարդ մետր կեղտաջրերի համար ՝ 27 դրամ .

2. << Հայփոստ >> փակ բաժնետիրական ընկերության Կոտայք գյուղի 2223 փոստային բաժանմունքի աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար աղբահանության վճար սահմանել՝ ամսական 1000 դրամ .

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ՌՈՄԱՆ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԱԳԻԿ
3. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՖԵԼԻՔՍ
4. ՄԿՐՏՉՅԱՆ ԳԱՐԻԿ
5. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ԿԱՐԵՆ
6. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ԱՂԱՍԻ
7. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԱՀԱԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ